011401.09.7 «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»

Մանկավարժության մագիստրոս

1. Ծրագրի անվանումը	011401.00.7 «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ »
2.1. ՈԱՇ-ի մակարդակ	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
2.2. Որակավորման աստիճան	Մանկավարժության մագիստրոսի աստիճան, մանկավարժի որակավորում
2.3. Կրեդիտների քանակը	60
2.4 Ուսման տևողությունը	1.5 տարի
3. Բուհ	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան
4. Ֆակուլտետ	Հասարակագիտական
5. Ամբիոններ	Արվեստի և սպորտի
6. Ուսուցման լեզու	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա
8. Արտոնագրում	«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» (011401.09.7) մասնագիտությունը հաստատված է Հայաստանի **Հանրապետության կառավարության <u>2021 թ. 12.20 2081-Ա/2 որոշմամբ</u>** Արտոնագրված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից (Լիցենզիա № 0023 N 2081 Ա/2), մասնագիտության ծածկագիրն է՝ 011401.09.7:
3. ԿԾ-ի մուտքի պայմաններ	«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ » մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա բակալավրի աստիճան:
Ծրագրի կառուցվածքը և նկարագրությունը	Մանկավարժության մագիստրոս, «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում մեկ ու կես տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 90 կրեդիտ է (1 կրեդիտը՝ 30 ժամ): Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից. I.Ընդհանուր դասընթացներ (6 կրեդիտ), II.Մասնագիտական պարտադիր դասընթացներ (39 կրեդիտ), III.Կամընտրական դասընթացներ (16 կրեդիտ), 9. Գիտահետազոտական աշխատանք՝ (կուրսային աշխատանք, հոդված՝հետազոտության ներրառմամբ, գիտահետազոտական պրակտիկա, մագիստրոսական

	ծրագրի ղեկավարի սեմինար) (10 կրեդիտ) 10. Գիտամանկավարժական պրակտիկա,(4 կրեդիտ) 11. Մագիստրոսական թեզի նախապատրաստում և պաշտպանություն (15 կրեդիտ):
Ծրագրի հիմնական նպատակը	Ծրագրի նպատակն է. Խորացնել ապագա մասնագետի մասնագիտական կրթական և ընդհանուր մշակութային կոմպետենցիաները ընտրված մասնագիտական ուղղության մեջ, նպաստել անձնական ինքնակրթությանը և գիտահետազոտական կարողությունների ձևավորմանը: Մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում ձևավորել ընդհանուր գիտական, սոցիալական, անձնական և գործառնական կոմպետենցիաները հաշվի առնելով տարածաշրջանի, բուհի և գիտական ներուժի առանձնահատկությունները, ինչպես նաև իրական աշխատաշուկայում տվյալ մասնագետների պահանջվածության աստիճանը:
3. Ծրագրի կրթական վերջնարդյունքները.	011401.09.7 «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի որակավորում ունեցող շրջանավարտը պետք է՝ ***8.1. Գիտենա՝*** • Մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիքներ • Ուսումնական գործընթացի իրականացման գործիքակազմը • Մանկավարժական, հոգեբանական և մեթոդական գաղափարները, • Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ: ***8.2. Կարողանա՝*** • ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն, • կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը, • կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, • իրականացնել մանկավարժական հետազոտություններ: ***8.3. Տիրապետի՝*** • գիտելիքի կիրառման հմտություններին, • տեղեկատվական, հաղորդակցական

	տեխնոլոգիաների (ՏՀՏ) և տվյալների հետ աշխատելու հմտություններին, • մանկավարժական գործունեության մեթոդներին, էթիկայի կանոններին:
4 «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆՄԱՐԶՈՒՄՆԵՐ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՑԱՆԿ	Մանկավարժի որակավորմամբ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտությամբ մագիստրոսը, ելնելով մասնագիտական գործունեության խնդիրներից և հիմնական կրթական ծրագրի նպատակներից, պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին: **Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն** Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. 1. Ճանաչել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գիտական գործունեության հիմունքները և արդի հիմնախնդիրները, շարժողական գործունեության դիդակտիկ, բժշկակենսաբանական և սոցիալ-հոգեբանական կողմերը: 2. Գիտենալ մարդու ֆիզիկական վիճակի նկատմամբ մանկավարժական հսկման, շարժողական կարողությունների թեստավորման, տվյալների մշակման ժամանակակից միջոցները և մեթոդները: 3. Ներկայացնել կրթական համակարգերի կառավարման գիտատեսական հիմքերը, սկզբունքները, մեթոդները և գործառույթները, ճանաչել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական և հասարակական կառավարման կառույցների աշխատանքները կարգավորող փաստաթղթերը: 4. Մեկնաբանել մանկավարժական և հոգեբանական գիտությունների առանձին գիտաճյուղերի հետազոտությունների մեթոդաբանությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում: Ներկայացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում կուտակված մարզամշակութային փորձը, օլիմպիական գաղափարախոսությունը և առողջությունը որպես առաջնային արժեք: **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ** Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. 1. Գնահատել սովորողների ֆիզիկական որակների ֆունկցիոնալ վիճակը, համապատասխանաբար ընտրել շարժողական կարողությունների

մշակման, շարժողական գործունեության կառավարման միջոցները և մեթոդները՝ հաշվի առնելով պարապողների անհատական առանձնահատկությունները:

2. Իրականացնել սպորտային կողմնորոշման և ընտրության համակարգը ընտրված մարզաձևում՝ օգտագործելով անհատի մարդաչափական, ֆիզիկական և հոգեբանական ցուցանիշների որոշման ժամանակակից մեթոդները:
3. Կազմակերպել և անցկացնել գիտամանկավարժական հետազոտություններ, ուսումնասիրել և որոշել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործունեության տարբեր կողմերի արդյունավետությունը:
4. Տիրապետել շարժողական կարողությունների թեստավորման մեթոդաբանությանը և արդյունքների մշակման մաթեմատիկական վիճակագրական մեթոդներին:
5. Կազմել պլանավորման և հսկման փաստաթղթեր, մշակել աշխատանքային օրացույցային պլան, կազմակերպել և անցկացնել մասսայական ֆիզկուլտուրային և սպորտային միջոցառումներ:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Ուսումնասիրել, հավաքագրել և ընդհանրացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև հարակից գիտությունների գիտամեթոդական ձեռբերումների վերաբերյալ տեղեկատվություն:
2. Իրականացնել գիտական հետազոտությունների արդյունքների տեսական և վիճակագրական վերլուծություն՝ կիրառելով պրակտիկ գործունեության ընթացքում:
3. Ստանձնել պատասխանատվություն թիմում իր և թիմակիցների աշխատանքների կազմակերպման և իրականացման համար՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը, ղեկավարվելով ազգային և համամարդկային արժեքներով:
4. Ընկալել և վերլուծել հարակից և մասնագիտական գիտելիքների միջև փոխադարձ կապը, զարգացման և փոխգործակցության հնարավոր ուղիները:
5. Տիրապետել բնակչության տարբեր տարիքային

	խմբերի կառավարման և տեղեկատվաքարոզչական մեթոդներին, ներգրավել սպորտային-ռեկրեացիոն գործունեությանը, քարոզել հայրենասիրություն, անձի առողջ ապրելակերպ, ձևավորել ֆիզիկական վարժություններով պարապմունքների նկատմամբ կայուն պահանջմունքներ:
5. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ	Ուսուցման իրականացման հիմնական ձևերն են. ա) դասախոսություններ, բ) գործնական պարապմունքներ, սեմինարներ, պրակտիկումներ գ) ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, էսսե, գործնական խաղեր), դ) մանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ:
6. Գնահատման մեթոդներ	ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ: Մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին: Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում. - ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, - ինքնուրույն կատարվող աշխատանքներ, - գործնական (սեմինար) և պրակտիկում (լաբորատոր) աշխատանքներին ուսանողի մասնակցություն, - ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ կամ քննություններ:
7. Մասնագիտական գործունեության ոլորտներ	«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝ բուհերում, սպորտային կառույցներում, ակումբներում, ֆեդերացիաներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, բուժական վերականգնողական կենտրոններում, հանրակրթական դպրոցներում:
Հետագա ուսման	«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային

հնարավորությունները	մարզումներ» մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած մագիստրոսը պատրաստ է կրթությունը շարունակելու՝ - ասպիրանտուրայում, - դոկտորանտուրայում: